Տարվա մի եղանակին միշտ մյուսն է հաջորդում, համենայն դեպս՝ մարդկանց աշխարհում: Մինչդեռ Պարիկների[1] խորշ կոչվող մոգական վայրում գարունը, ամառը, աշունն ու ձմեռը միշտ կողք կողքի են: Ջերմասեր փերիները նախընտրում են գարունը, ամառն ու աշունը: Ձմռան փերիները բնակվում են խստաշունչ ձնառատ տեղերում: Բայց ուր էլ լինեն, բոլոր փերիները միշտ միմյանց օգնության են հասնում...

1 Պարիկ – հեքիաթային ոգի, փերի:

Զանգակի ծերպում եռուզեռ էր: Թռվռիկ պարիկները ձմռան փերիների համար փաթիլազամբյուղներ էին պատրաստում:

Շուտով սպիտակ բվերի երամը ժամանեց զամբյուղները տանելու և հաջորդ պատվերը Մարի փերուն հանձնելու:

– Աստվա՛ծ իմ,– հառաչեց Մարի փերին,– դեռ քսան զամբյուղ էլ վաղվա համար պիտի պատրաստենք:

Զանգակը Ձմռան անտառի ճամփան բռնած գեղեցիկ թռչուններին նայեց: Երանի ինքն էլ նրանց հետ գնար:

«Տեսնես ի՞նչ զարմանալի աշխարհ է այնտեղ»,– ասաց ինքն իրեն:

Քիչ անց դեմ առ դեմ ընկերոջը՝ Ֆավնոսին տեսավ:

– Զգուշացի՛ր,– կանչեց Ֆավնոսը՝ պարիկների աշխատանոցի միջով մի նապաստակի հետևից ընկած: Ֆավնոսը բոլոր կենդանիների պահապան ոգին էր և պետք է նրանց սահմանից անդին՝ Զմռան անտառը ճանապարհեր:

Զանգակը Ֆավնոսին օգնեց, որ նապաստակին բռնի:

– Կենդանիներին էսո՞ր ես տանելու,– հարցրեց:– Դեմ չե՞ս լինի՝ քեզ օգնեմ:

Զմռան փերիների բնակավայր գնալու էլ ի՞նչ առիթ կլիներ:



գիրքն ամբողջությամբ՝

ԱՅՍՏԵՂ